

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԵՎԻԿ ԱՆՑԱԿԱՆԻ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ը.00.01-«Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Գրիգոր Եղիշի Կիրակոսյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Ռոբերտ Ներսեսի Սարինյան տնտեսագիտության թեկնածու՝ Արթուր Ռաֆիկի Թամազյան
Առաջատար կազմակերպություն՝	Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ.-ի հունվարի 22-ին
ժամը 14⁰⁰-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում
գործող ՀՀ ԲՈՅ-ի տնտեսագիտության թիվ 014 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0025, ք. Երևան, Մ. Նալբանդյան 128:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2014 թ. դեկտեմբերի 22-ին:

014 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր՝



Ս. Ա. Գևորգյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության քեմայի արդիականությունը: Մրցակցությունը ժամանակակից շուկայական տնտեսության անբաժան տարրն է: Ներկայիս տնտեսական զարգացման պայմաններում անհնար է պատկերացնել տնտեսության որևէ ոլորտ կամ հասարակական հարաբերությունների տեսանկյուն, որտեղ մրցակցության դերն ու նշանակությունը դիտարկվի որպես երկրորդական գործընթաց:

Մրցակցային հարաբերությունները դրսևորվում են շուկայական տնտեսության բոլոր սուբյեկտների միջև՝ ընդգրկելով տնտեսական հարաբերությունների գլխավոր ոլորտները՝ արտադրություն, բաշխում, փոխանակություն և սպառում:

Ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ որոշակիորեն «միահյուսվում» են ազգային և համաշխարհային տնտեսության սահմանները, մրցակցությունը ձեռք է բերում ընդգծված գլոբալ բնույթ: Այս առումով ցանկացած պետության նպատակն է ինչպես համաշխարհային շուկայում հայրենական արտադրանքի մրցունակության բարձրացումը, այնպես էլ ազգային տնտեսության մրցակցային դիրքերի բարելավումը:

Մի կողմից՝ մրցակցությունը նպաստում է արտադրանքի որակի բարձրացմանը, արտադրական ծախսերի և գների նվազմանը, ԳՏԱ-ի տեմպերի արագացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, մյուս կողմից՝ այն կարող է նպաստել գերիշխող դիրքի ձեռքբերմանը, եթե պետության կողմից չկիրառվեն որոշակի սահմանափակումներ: Այս առումով առաջանում է մրցակցային հարաբերությունների պետական կարգավորման անհրաժեշտություն: Ժամանակակից պայմաններում մրցակցային քաղաքականությունն ուղղված է շուկայում մենաշնորհների առաջացման կանխմանը, առողջ մրցակցության ձևավորման համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, տնտեսվարող սուբյեկտների գործունեության համար հավասար պայմանների ապահովմանը և արդեն իսկ գոյություն ունեցող մենաշնորհների վերացմանը:

Այդուհանդերձ, բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորմանը խոչընդոտում են մի շարք գործոններ, որոնց կազմն ու ազդեցության առանձնահատկությունները տարբերվում են ըստ երկրների: ՀՀ-ում կարելի է առանձնացնել հետևյալ գլխավոր խոչընդոտները՝ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայություն, շուկաների կենտրոնացման բարձր աստիճան, տեղական մրցակցության ցածր ինտենսիվություն, հակամենաշնորհային

քաղաքականության անարդյունավետություն, շուկա մուտք գործելու վարչական և տնտեսական արգելքների առկայություն, ինստիտուցիոնալ խնդիրներ, որոնք նույնիսկ են ապրանքների և ծառայությունների շուկայի բնականոն գործունեությանը և պայմանավորված են սահմանափակող կարգավորումներով, մրցակցային կանոնների և պետական գնումների համակարգի ոչ լիարժեք ապահովմամբ, մրցակցությունը սահմանափակող պետական օժանդակությամբ, ստվերային տնտեսության մեծ չափերի և կոռուպցիայի բարձր մակարդակի առկայությամբ: Պետք է նկատել, որ ՀՀ-ում բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորումը նշանակալի դրական ազդեցություն կարող է ունենալ ինչպես ազգային տնտեսության զարգացման միտումների, այնպես էլ բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա:

Արդյունավետ քաղաքականության մշակման և իրականացման համար նախ անհրաժեշտ է համակողմանի վերլուծել կոնկրետ տնտեսական տարածքի մրցակցային միջավայրի առանձնահատկությունները, բացահայել դրա դրական և բացասական կողմերը: Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա իրականացնել առավել լիարժեք միջոցառումների համալիր և հասնել ցանկալի արդյունքի: Պետք է նշել, որ նասնագիտական գրականության մեջ լայն տարածում ստացած Լեոնեի և Հերֆինդալի ինդեքսները հնարավորություն են տալիս գնահատելու միայն ճյուղի մրցակցային միջավայրը, իսկ ամբողջ տնտեսության մասշտաբով մրցակցային միջավայրի գնահատման ընդհանրական ինդեքս դեռևս չկա:

Վերը նշված հիմնախնդիրների առկայությամբ է պայմանավորված ատենախոսության թեմայի արդիականությունը, ինչը պահանջում է խորը և գիտականորեն հիմնավորված վերլուծություն, որի արդյունքում կբացահայտվեն ՀՀ մրցակցային միջավայրի զարգացման նախադրյալներն ու հեռանկարները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակն է ժամանակակից գլոբալացման պայմաններում մրցակցության կերպավորումների, մրցակցային միջավայրի գնահատման տեսամեթոդական հիմքերի և պետական կարգավորման անհրաժեշտության հիմնավորումների վերլուծությունների արդյունքում հետազոտել և ներկայացնել ՀՀ մրցակցային միջավայրի արդի վիճակը՝ վեր հանելով հիմնական խոչնդոտները և առաջարկել դրանց հաղթահարման միջոցառումները: Առաջադրված նպատակի իրականացման համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- հետազոտել «մրցակցություն» տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը՝ բացահայտելով դրա դերը շուկայական տնտեսությունում,
- ուսումնասիրել մրցակցային միջավայրի գնահատման չափանիշները,
- վերլուծել և գնահատել Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի պետական կարգավորման առանձնահատկությունները,
- բացահայտել Հայաստանի Հանրապետության մրցակցային միջավայրի բարելավման հիմնական ուղղություններն ու մեխանիզմները,
- համեմատական վերլուծության հիման վրա բացահայտել մրցակցային միջավայրի ձևավորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում,
- ուսումնասիրել և բացահայտել Հայաստանի Հանրապետությունում մրցակցային միջավայրի կատարելագործման նախադրյալները և հեռանկարները:

Ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը մրցակցային միջավայրն է՝ որպես շուկայական տնտեսության հիմնասյուն և տնտեսական համակարգի կայուն զարգացման առանցքային գործոն: Հետազոտության առարկան մրցակցային միջավայրի ձևավորման ու զարգացման գործընթացում ձևավորվող տնտեսական հարաբերությունների համակարգն է:

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական ու ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, մոդելներն ու մեթոդները, օտարերկրյա և հայ հետազոտողների աշխատությունները: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ և արտասահմանյան երկրների օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի, ՀՀ մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի, միջազգային կազմակերպությունների (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ, Համաշխարհային տնտեսական ֆորում, Համաշխարհային բանկ) զեկույցները, հաշվետվությունները և պաշտոնական տեղեկագրերը:

Ատենախոսության մեջ կիրառվել են համեմատական վերլուծության, վիճակագրական, մաթեմատիկական, մոդելավորման, խմբավորման և այլ մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում

- «մրցակցություն» և «մրցակցային միջավայր» տնտեսագիտական կատեգորիաների տեսական հայեցակարգերի վերլուծության և որանց համադրման հիման վրա տրվել է այդ կատեգորիաների ^{համապատասխան} նահանգնում, որի հիմքում դրված են մրցակցության միջազգայնացման գործընթացը և մրցակցային հարաբերությունների պետական կարգավորման ^{համապատասխան} հրահանգները, ^{2.}
- մրցակցային միջավայրի հիմնական գործոնների վերլուծության հիման վրա մշակվել է ազգային տնտեսության ~~մասշտաբով~~ մրցակցային միջավայրի գնահատման ինտեգրալային ցուցանիշ,
- մրցակցային միջավայրի գնահատման ինտեգրալային ցուցանիշի ^{կառուցում} միջոցով բացահայտվել են ՀՀ մրցակցային միջավայրի ^{հիմնական} առավելություններն ու թերությունները, մատնանշվել են դրա կատարելագործման ^{հիմնական} ուղիները:

Հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունում կատարված վերլուծությունները և ստացված արդյունքները կարող են օգտակար լինել մրցակցության, մրցունակության, մրցակցային միջավայրի գնահատման և պետական կարգավորման հիմնախնդիրների վերլուծությամբ զբաղվող տնտեսագետների, ասպիրանտների և համապատասխան մասնագետների համար: Ատենախոսության գործնական նշանակությունն այն է, որ հետազոտության ընթացքում բացահայտված տեսական և գործնական արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ համապատասխան կառույցների կողմից մրցակցային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակման, ինչպես նաև հակամենաշնորհային միջոցառումների իրականացման ընթացքում:

Ատենախոսության մեջ ներկայացված հիմնական դրույթները և հետազոտության արդյունքները հրապարակված են գիտական չորս հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության ծավալը և կառուցվածքը պայմանավորված են առաջադրված նպատակով և խնդիրներով, ուսումնասիրության մակարդակով: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը բաղկացած է 117 էջից՝ առանց հավելվածների: Ատենախոսությունը պարունակում է 6 աղյուսակ, 1 գծապատկեր, իսկ հավելվածներում ներկայացված է 4 աղյուսակ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, ուսումնասիրության առարկան և օբյեկտը, ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև կառուցվածքը և ծավալը:

Ատենախոսության առաջին «Մրցակցությունը որպես շուկայական տնտեսության շարժիչ ուժ» գլխում ներկայացվել են «մրցակցություն» տնտեսագիտական կատեգորիայի բովանդակությունը և դրա տարբեր մեկնաբանությունները, կատարվել է մրցակցության մոդելների տեսական հայեցակետերի քննական վերլուծություն, ինչպես նաև բացահայտվել են ժամանակակից պայմաններում մրցակցության կերպափոխումները:

Մրցակցությունը շուկայական տնտեսության կարևորագույն տարրն է, առանց որի շուկան գոյություն ունենալ և լիարժեք գործել չի կարող: Մրցակցությունն արտահայտում է շուկայական տնտեսության մասնակիցների փոխհարաբերությունները կապված արտադրողական ուժերի զարգացման և սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման հետ: Մրցակցությունն է պարտադրում արտադրողներին և ռեսուրսների մատակարարներին առավել պատշաճ կերպով բավարարել պահանջմունքները: Այն նպաստում է թողարկման ծավալների ընդլայնմանն ու ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացմանը՝ ֆիրմաներին ստիպելով կիրառել արդյունավետ տեխնիկա և տեխնոլոգիա, արտադրության կազմակերպման ժամանակակից եղանակներ:

Մրցակցությունը՝ որպես տնտեսական երևույթ, առևտրային հարաբերությունների ձևավորման արդյունքում է առաջացել և առավել լայն տարածում է ստացել ազատ շուկայական հարաբերությունների ձևավորմանն ու զարգացմանը զուգընթաց: Այդ ընթացքում մրցակցության վերաբերյալ ձևավորվել են մի շարք տեսություններ: Դասականներն այն դիտարկել են որպես շուկայական տնտեսության կենսագործունեության անհրաժեշտ պայման: Մրցակցության՝ որպես առանցքային տնտեսագիտական կատեգորիայի լավագույն մեկնաբանություններից է Ա. Սմիթի մոտեցումը: Նա մրցակցությունը նույնացրել է «անտեսանելի ձեռքի» հետ՝ մեկնաբանելով որպես շուկայական տնտեսության ինքնաբերական հավասարակշռող մեխանիզմ: Ա. Սմիթը «մրցակցությունը» ներկայացնում է նաև որպես վարքագծային

կատեգորիա, երբ վաճառողներն ու գնորդները շուկայում մրցում են առքուվաճառքի առավել նպաստավոր պայմանների համար: Մրցակցության էության մեկնաբանման յուրատեսակ մոտեցում է ընկած հայտնի ավստրիացի տնտեսագետ Ժ. Շումպերթերի ուսումնասիրությունների հիմքում. Շումպերթերը մրցակցությունը դիտարկում է որպես նորարարության ոգի, որը ներառում է արտադրանքի նոր տեսականու, նորագույն արտադրական և տրանսպորտային տեխնոլոգիաների, նույնիսկ ձեռներեցության կազմակերպման նոր եղանակների մշակումն ու ստեղծումը¹:

Ընդհանուր առմամբ մասնագիտական գրականության մեջ գոյություն ունի «մրցակցություն» կատեգորիայի տնտեսագիտական էության մեկնաբանման երկու մոտեցում. մի դեպքում մրցակցությունը սահմանվում է որպես վարքագծային կատեգորիա, մյուս դեպքում՝ որպես գործընթաց: Օրինակ՝ տնտեսագիտական բացատրական բառարանում մրցակցությունը բնորոշվում է որպես՝ «Պայմաններ, երբ շուկայում հանդես եկող անձանց կամ ձեռնարկությունների քանակը այնքան մեծ է, որ այդ գործակալներից յուրաքանչյուրի վարքը չի ազդում գնի մակարդակի վրա»²: Իսկ Հայաստանի մրցակցային օրենսդրությունը մրցակցությունը սահմանում է որպես գործընթաց. «Մրցակցությունը ապրանքի իրացման կամ ձեռքբերման առավել նպաստավոր պայմանների ապահովմանն ուղղված տնտեսական գործունեություն է, որի արդյունքում օբյեկտիվորեն սահմանափակվում են տվյալ ապրանքային շուկայում ապրանքների շրջանառության ընդհանուր պայմանների վրա մրցակիցներից յուրաքանչյուրի միակողմանի ազդելու հնարավորությունները»³:

Մրցակցության բնույթի և դրսևորումների վերաբերյալ գիտական հայացքների էվոլյուցիայի արդյունքում ձևավորված տեսակետների և առկա մոտեցումների համադրման միջոցով փորձել ենք տալ «մրցակցություն» տնտեսագիտական կատեգորիայի հետևյալ ընդհանրական սահմանումը

տնտեսական մրցակցությունը տնտեսավարող սուբյեկտների միջև ինչպես ազգային, այնպես էլ համաշխարհային մասշտաբով մղվող տնտեսական պայքարն է

¹ Шумпетер Й., Теория экономического развития, М., Прогресс, 1982, с. 158

² Կիրակոսյան Գ. Ե., Տիգրանյան Ի. Տ., Ղուշչյան Գ. Բ., «Տնտեսագիտական բացատրական բառարան», Եր., «Տնտեսագետ», 1999 թ., էջ 283:

³ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, Հոդված 4, ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 30, 15 դեկտեմբերի, 2000 թ.:

սահմանափակ ռեսուրսների ձեռքբերման, ապրանքների ու ծառայությունների արտադրության, դրանց առքուվաճառքի լավագույն պայմաններին տիրելու համար:

Մրցակցությունը, լինելով շուկայական տնտեսության հիմնական տարրերից, իր անմիջական դրսևորումն է ստանում տնտեսական հարաբերությունների բոլոր ոլորտներում արտադրություն, բաշխում, փոխանակություն և սպառում, ինչն էլ բնորոշել ենք հետևյալ սահմանման միջոցով: Մեր կողմից բերված սահմանումը բնորոշում է նաև մրցակցության միջազգայնացման գործընթացը, ըստ որի ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ որոշակիորեն «միահյուսվել» են ազգային և համաշխարհային տնտեսության սահմանները, մրցակցությունը դուրս է եկել ազգային տնտեսության սահմաններից և վեր է ածվել երկրների միջև տնտեսական պայքարի:

Ատենախոսության երկրորդ «Մրցակցային միջավայրի գնահատման և պետական կարգավորման անհրաժեշտության տեսական հիմնախնդիրները» գլխում ուսումնասիրվել են մրցակցային միջավայրի պետական կարգավորման արդի հիմնախնդիրները, այդ թվում մրցակցային հարաբերությունների պետական կարգավորման հիմնախնդիրները 33-ում, ինչպես նաև մրցակցային միջավայրի գնահատման տեսամեթոդական հիմքերը:

Ինչպես նշել ենք, մրցակցությունը շուկայական տնտեսության շարժիչ ուժն է: Այս առումով հատուկ ուշադրության է արժանանում այն ինստիտուցիոնալ պայմանների բացահայտումը, որոնք բարենպաստ միջավայր են ապահովում մրցակցության ձևավորման և զարգացման համար: Ցանկացած տնտեսության համար առաջնային է դառնում այնպիսի պայմանների, ինստիտուտների, նորմերի ստեղծումը, որոնք կնպաստեն առողջ մրցակցության ձևավորմանը և ծավալմանը: Այսինքն, ցանկացած տնտեսության առաջնային նպատակներից մեկը պետք է լինի բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորումը:

«Մրցակցային միջավայրը» հարաբերական հասկացություն է, քանի որ սյն բնորոշում է կոնկրետ շուկայում որոշակի արտադրանք թողարկող արտադրողների քանակը, նրանց միջև մրցակցության արդյունքում ձևավորված հարաբերություններն ու պայմանները, մրցակցության ուժգնությունը բնութագրող քանակական ու որակական ցուցանիշները: Այդ իսկ պատճառով յուրաքանչյուրը կարող է յուրովի ընկալել

«մրցակցային միջավայր» կատեգորիան: Կարծում ենք, որ «մրցակցային միջավայր» հասկացությանն առավել բնորոշ է հետևյալ սահմանումը.

մրցակցային միջավայրը որոշակի շուկայում կամ ճյուղում պետության միջամտությամբ և տնտեսվարող սուբյեկտների փոխհարաբերությունների արդյունքում ձևավորվող այն պայմանների, փոխհարաբերությունների, ինստիտուտների, կանոնների ու նորմերի ամբողջությունն է, որն անհրաժեշտ է մրցակցության ծավալման և տարածման համար:

Պետությունը կարգավորում է մրցակցային հարաբերությունները՝ մշակելով համապատասխան քաղաքականություն (մրցակցային քաղաքականություն), որը շուկայական հարաբերությունների պայմաններում պետական տնտեսական քաղաքականության անբաժան մասն է կազմում: Մրցակցային քաղաքականությունը ընդհանրական հասկացություն է և չի կարող սահմանափակվել միայն հակամենաշնորհային քաղաքականությամբ: Իրականում մրցակցային քաղաքականությունն անհնար է պատկերացնել առանց դրա բաղկացուցիչ մասերի՝ արդյունաբերական, նորարարական, ներդրումային, հարկաբյուջետային, զնային քաղաքականությունների: Մրցակցային քաղաքականության նպատակների թվին են դասվում՝ տնտեսության բոլոր ոլորտներում տնտեսական արդյունավետության հասնելը, հասարակական բարեկեցության բարձրացումը, տնտեսական աճի ապահովումը, հայրենական արտադրողների մրցունակության բարձրացումը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում, ազգային տնտեսության դերի բարձրացումը և ներդրումային միջավայրի բարելավումը⁴:

ՀՀ-ում մրցակցային քաղաքականության հիմնական մտեցումներն արտացոլված են «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում⁵ (այսուհետև՝ Օրենք), որը կզգային ժողովում ընդունվել է 2000 թվականի նոյեմբերի 6-ին: Համաձայն Օրենքի՝ 2001 թվականի հունվարի 13-ին տնտեսական մրցակցության պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության իրականացման նպատակով ստեղծվել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը (այսուհետև՝ Հանձնաժողով): Հանձնաժողովի խնդիրներն են ⁶ ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության

⁴ Якунин В. И., Сулашкин С. С., Фонарева Н. Е. Государственная конкурентная политика и стимулирование конкуренции в РФ. Т. 1, М., 2008 г., с. 13-17

⁵ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենք, ՀՀ պաշտոնական տեղեկագիր N 30, 15 դեկտեմբերի, 2000 թ.:

⁶ ՀՀ ՏՄՊԴՀ-ի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.competition.am

նպատակով ազատ տնտեսական մրցակցության պաշտպանումը և խրախուսումը, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովումը, հականրցակցային գործունեության կանխարգելումը, սահմանափակումը և նախազգուշացումը, տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողությունը:

Հանձնաժողովի կողմից ձեռնարկվող միջոցառումները հիմնված են ապրանքային շուկաների վերլուծության վրա: Ընդհանուր առմամբ, 2013թ.-ի դեկտեմբերի 20-ի դրությամբ Հանձնաժողովի կողմից գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությամբ շուկաներից 57 պարենային ապրանքային շուկաներում գերիշխող դիրք ունեցող են ճանաչվել 62 տնտեսվարող սուբյեկտ, 73 ոչ պարենային ապրանքային (ծառայությունների) շուկաներում՝ 45 տնտեսվարող սուբյեկտ և 17 դեղերի շուկաներում՝ 11 տնտեսվարող սուբյեկտ⁷: Հիմք ընդունելով նախորդ տարում կատարված տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը և բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակված փորձը՝ Հանձնաժողովի կողմից մշակվում է տարեկան գործունեության ծրագիր: Համեմատելով տարբեր տարիների ծրագրերով նախատեսվող միջոցառումները տեսնում ենք, որ դրանք համարյա փոփոխության չեն ենթարկվել, ինչը նշանակում է, որ Հանձնաժողովի ծրագրած գործունեությունը լիարժեք կերպով չի իրականացվում: Այդ մասին են վկայում նաև ապրանքային շուկաների զգալի մասում համակենտրոնացման բարձր աստիճանը և գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայությունը: Ընդ որում, միևնույն տնտեսվարող սուբյեկտը գերիշխող դիրք է զբաղեցնում միաժամանակ մի քանի շուկաներում: Չնայած 2011 թվականին օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ⁸, դեռևս կան որոշակի բացթողումներ: Մասնավորապես, անհրաժեշտ է վերանայել սահմանված տույժերի և տուգանքների չափերը: Ձեռնարկված միջոցառումները օրենսդրության անկատարության պատճառով բավականաչափ կանխարգելող արդյունք չեն տալիս, և նկատվում է միևնույն

⁷ ՀՀ ՏՄՊՊՀ-ի 2013 թվականի տարեկան հաշվետվություն, էջ 5, Երևան, 2014թ. www.competition.am

⁸ ՀՀ օրենքը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին, ՀՕ-137-Ն, 23 մայիսի, 2011 թ.:

տնտեսվարող սուբյեկտի կողմից միևնույն ապրանքի գծով անբարեխիղճ մրցակցության դրսևորումների բազմակիությունը:

Քանի որ աշխատանքում մեր առջև խնդիր ենք դրել բացահայտել ՀՀ մրցակցային միջավայրի ծևավորման առանձնահատկությունները, ուստի առավել նպատակահարմար է կատարել համեմատական վերլուծություն, ինչը հնարավորություն կտա խորքային պատկերացում կազմել քննարկվող երևույթի վերաբերյալ: Արդյունավետ համեմատական վերլուծության համար անհրաժեշտ է քննարկել այլ անցումային տնտեսությունների մրցակցային միջավայրի առանձնահատկությունները: Նման ընտրության հիմնավորումն այն է, որ ՀՀ-ն, լինելով ետխորհրդային անցումային տնտեսությամբ երկիր, ունի այլ անցումային երկրների հետ մեծ թվով նմանություններ: Կարծում ենք, որ այդ երկրներում պետք է վերլուծել ոչ թե բարենպաստ և ոչ բարենպաստ մրցակցային միջավայրի առկայությունը, այլ մրցակցային միջավայրի առկայությունն ընդհանրապես:

Պետք է նկատել, որ մասնագիտական գրականության մեջ լայն տարածում ստացած Լեոնեթի և Հերֆինդալի ինդեքսները լիարժեք հնարավորություն չեն տալիս գնահատելու մրցակցային միջավայրն ամբողջ տնտեսության մասշտաբով: Դրանք առավել նպատակահարմար են ճյուղի մրցակցային միջավայրի գնահատման համար: Կարծում ենք, որ մրցակցային միջավայրի գնահատման համար օգտագործվող ցուցանիշը պետք է ներառի այնպիսի բաղադրիչներ, որոնք արտացոլեն քննարկվող համակարգի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ տնտեսական պայմանները: Այդ նպատակով աշխատանքում մշակել ենք ազգային տնտեսության մասշտաբով մրցակցային միջավայրի գնահատման ինտեգրալային ցուցանիշ, որը հաշվարկել ենք մրցակցային միջավայրի ինչպես ինստիտուցիոնալ, այնպես էլ տնտեսական պայմանները բնութագրող մի շարք ցուցանիշների («գործարարությամբ զբաղվելու» ինդեքս, տնտեսական ազատության ինդեքս, մրցունակության համաշխարհային ինդեքս, ներդրումներ/ՅՆԱ հարաբերակցություն, բնակչության մեկ շնչի հաշվով ՅՆԱ-ի ցուցանիշ, ստվերային տնտեսության մակարդակ) բալային գնահատման արդյունքում: Բալային գնահատականների վերջնական հանրագումարն էլ իրենից ներակայացնում է մրցակցային միջավայրի ինտեգրալային ցուցանիշը, որը որոշել ենք հետևյալ բանաձևով.

$$I_{ip} = \sum_{i=1}^n M(i),^9$$

որտեղ՝ I_{ip} -ն տնտեսական տարածքի մրցակցային միջավայրի ազդեցացված համաթիվն է,

i-ն ցուցանիչի ինդեքսն է,

n-ը ցուցանիչների թիվը,

M(i)-ն i-րդ ցուցանիչի բալային գնահատականը:

Ատենախոսության երրորդ՝ «Մրցակցային միջավայրի բարելավման ուղիները Հայաստանի Հանրապետությունում» գլխում մեր կողմից մշակված ինտեգրալային ցուցանիչի և տարածաշրջանային երկրների (Վրաստան և Ադրբեջան) համատեքստում իրականացված համեմատական վերլուծության արդյունքում բացահայտվել են ՀՀ մրցակցային միջավայրի առավելություններն ու թերությունները, մատնանշվել են ՀՀ մրցակցային միջավայրի կատարելագործման նախադրյալներն ու հեռանկարները:

Աղյուսակ 1-ում ներկայացված են Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մրցակցային միջավայրի գնահատման ինտեգրալային ցուցանիչները:

Աղյուսակ 1

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի մրցակցային միջավայրի գնահատման ինտեգրալային ցուցանիչները (2013թ.)¹⁰

Երկրներ	Բալային գնահատականներ						Մրցակցային միջավայրի գնահատման ինտեգրալային ցուցանիչ
	«Փորձարարությանը զբաղվելու» ինդեքս	Տնտեսական ազատության ինդեքս	Մրցունակության համաշխարհային ինդեքս	Ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցություն	Բնակչության մեկ շնչի հաշվով ՀՆԱ	Ստվերային տնտեսության մակարդակ	
-	1	2	3	4	5	6	1+2+3+4+5+6
Հայաստան	83.8	100	91.0	72.6	36.6	83.7	467.7
Վրաստան	100	99	93.2	85.8	45.4	100	523.4
Ադրբեջան	75.0	86.8	100	100	100	95.3	557.1

⁹ Մշակվել է հեղինակի մոտեցումների հիման վրա:

¹⁰ Հաշվարկվել են ատենախոսության 70,72,73,74,75-րդ էջերում ստացված տվյալների հիման վրա:

Ատենախոսությունում մեր կողմից մշակված մեթոդաբանության հիման վրա կատարված համեմատական վերլուծության արդյունքում տեսնում ենք, որ Հայաստանը մի շարք ցուցանիշներով զիջում է տարածաշրջանային երկրներին. եթե որոշ ցուցանիշների գծով (գործարարությամբ զբաղվելու անվտանգության աստիճան, ֆինանսական ազատություն) բարձր դիրքեր է զբաղեցնում, ապա այնպիսի կարևոր գործոններով, ինչպիսիք են ինստիտուտների որակը, ենթակառուցվածքների զարգացվածության մակարդակը, մրցակցության ինտենսիվության աստիճանը, հակամենաշնորհային քաղաքականության արդյունավետությունը, շուկայի չափը, տեխնոլոգիական պատրաստականության մակարդակը, զբաղեցնում է ցածր հորիզոնականներ: ՀՀ մրցակցային միջավայրի ծնավորման համար լուրջ խոչընդոտ է հանդիսանում հատկապես ստվերային տնտեսության մեծ ծավալների առկայությունը, քանի որ այն անհավասար պայմաններ է առաջացնում մրցակիցների համար, խեղաթյուրում է առանձին ապրանքային շուկաներում մրցակցության իրական գնահատականը՝ դրանով իսկ խոչընդոտելով նաև հակամենաշնորհային մարմնի գործունեությանը: Տարածաշրջանում ամենաբարձր ստվերայնությունն ունի Հայաստանը 35%, ընդ որում բիզնես սկսելու և վարելու համար անհրաժեշտ օրենսդրությունն ու միջավայրը Հայաստանում ստվերայնության չափերի հիմնական պատճառն է և համարվում է ավելի լուրջ «ստվերայնացնող» գործոն, քան հարկային բեռն ու աշխատանքի շուկայի ճկունությունը¹¹:

ՀՀ մրցակցային միջավայրում առկա բազմաթիվ հիմնախնդիրների լուծումը չպետք է սահմանափակվի միայն Հանձնաժողովի գործունեությամբ, քանզի Հանձնաժողովը կարող է շատ արդյունավետ գործել լիարժեք իրականացնելով տարեկան ծրագրերով նախատեսվող միջոցառումները, խիստ վերահսկողություն հաստատելով մրցակցության մասին օրենսդրության կատարման նկատմամբ, թույլ չտալով գերիշխող դիրքի չարաշահումներ, անբարեխիղճ մրցակցության դրսևորումներ, սակայն պետական մարմինները իրենց կայացրած որոշումներով և մշակած օրենքներով, կարող են խոչընդոտել երկրում բարենպաստ մրցակցային միջավայրի ծնավորմանը: Ինչպես արդեն նշել ենք, մրցակցային քաղաքականությունը չի սահմանափակվում միայն հակամենաշնորհային քաղաքականությամբ, խիստ անհրաժեշտ է նաև համապատասխան պետական մարմինների մասնակցությունը,

¹¹ Abdih Y and Medina I. "Measuring the Informal Economy in the Caucasus and Central Asia", IMF Working Paper, WP/13/137, May 2013, p 14-17, www.imf.org.

որոնք, վարելով աջակցող ներդրումային, հարկաբյուջետային, դրամավարկային և գնային քաղաքականություններ, կնպաստեն հիմնախնդիրների որոշ չափով հաղթահարմանը:

ՀՀ մրցակցային միջավայրի կատարելագործման համար կարևոր նախադրյալ է հաղիսանում ներդրումների ծավալների ավելացումը: Քանի որ ներքին ներդրումների աղբյուրները սահմանափակ են, ուստի շեշտը պետք է դնել օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա: Ատենախոսությունում ներկայացվել են տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների ծավալները 2009-2013թթ. դրությամբ¹², ինչից երևում է, որ ամենամեծ ներդրումները եղել են 2009թ.-ին (935.5 մլն. դոլար): 2013թ.-ին (597.4 մլն. դոլար) 2009թ.-ի հետ համեմատած օտարերկրյա ներդրումները նվազել են 36%-ով, իսկ ՕՈՒՆ-ները 63%-ով (2009թ. 732.1 մլն. դոլար, 2013 թ. 271.2 մլն. դոլար): ՕՈՒՆ-ները նվազման միտում ունեն, ինչը պայմանավորված է ՀՀ ներդրումային միջավայրի վրա ազդող մի շարք բացասական գործոններով (քաղաքական անկայունությունը, անկանխատեսելի տնտեսական քաղաքականությունը, սովետային տնտեսության մեծ ծավալների և կոռուպցիայի բարձր մակարդակի առկայությունը, օրենսդրական դաշտի անկայունությունը, ենթաօրենսդրական ակտերի և օրենքների հստակ կիրառումն ապահովող անհրաժեշտ որոշումների ու իրավական ակտերի բացակայությունը, վարչական խոչընդոտների առկայությունը, բնակչության շարունակական կրճատմամբ պայմանավորված ներքին շուկայի փոքր չափերը և բնակչության գնողունակության ցածր մակարդակը):

Մրցակցային միջավայրի բարելավման հարցում հատկապես մեծ է փոքր և միջին ձեռնարկատիրության դերը (այսուհետև՝ ՓՄՁ), քանի որ ձեռնարկատիրական բարենպաստ միջավայրը հանգեցնում է մրցակցային բարենպաստ միջավայրի ձևավորմանը, և հակառակը ձեռնարկատիրական միջավայրի խոչընդոտներն անպայման անդրադառնում են մասն մրցակցային միջավայրի վրա: Ատենախոսությունում դիտարկելով Հայաստանում ՓՄՁ ոլորտը բնութագրող ցուցանիշները 2007-2013 թթ.-ի¹³ կտրվածքով՝ տեսնում ենք, որ լավագույն պատկերը

¹² ՀՀ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական ինտերնետային կայք www.mineconomy.am
ՀՀ տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների վերաբերյալ վիճակագրություն:

¹³ ՀՀ ՓՄՁ ՁԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայք՝ www.smednc.am ՓՄՁ ՁԱԿ-ի տեղեկագրեր

եղել է 2009թ.-ին (ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կազմել է 136008, ՓՄՁ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 42.5%, իսկ ՓՄՁ սուբյեկտներում զբաղվածների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում 42.2 %): 2010թ.-ին ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը կտրուկ նվազել է (2010 թ. ընթացքում ՓՄՁ-ների քանակը 2009թ.-ի համեմատ նվազել է մոտ 56%-ով): Սա հիմնականում պայմանավորված է ինչպես 2009 թվականի ֆինանսատնտեսական ճգնաժամով, այնպես էլ նրանով, որ ՓՄՁ սուբյեկտները իրենց ձեռնարկությունը հիմնելու ընթացքում բախվում են այնպիսի անհաղթահարելի վարչական խոչընդոտների և շուկայական սահմանափակումների, որ փաստացի դեռ չսկսած գործունեությունը այն դադարեցնում են: Չնայած 2011թ.-ից ՓՄՁ սուբյեկտների թվաքանակը նորից սկսում է ավելանալ (2012թ. ընթացքում ՓՄՁ-ների քանակը 2010թ.-ի համեմատ ավելացել է մոտ 25 %-ով), այդուհանդերձ ոլորտում ևսուկա հիմնախնդիրները դեռևս անհաղթահարելի են: Բացի այդ, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գրանցված ՓՄՁ սուբյեկտների մի մասը փաստացի գործունեություն չի ծավալում, ինչն էլ խեղաթյուրում է ոլորտի իրական պատկերը:

Վերջին տարիներին պետության կողմից մի շարք միջոցառումներ են ձեռնարկվել ՓՄՁ ոլորտի զարգացումը խթանելու նպատակով: 2001թ.-ից երկրում մշակվում և իրականացվում են ՓՄՁ պետական աջակցության ծրագրեր, որոնք նպատակաուղղված են իրականացնելու «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքով¹⁴ ամրագրված ՓՄՁ ոլորտի պետական աջակցության հիմնական ուղղությունները: ՓՄՁ պետական աջակցության 2002 թ. ծրագրի շրջանակներում, որպես ծրագրային միջոցառում, ՀՀ կառավարության 19.03.2002 թ. N 282 որոշմամբ հիմնադրվել է «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը, որը հանդիսանում է Հայաստանում ՓՄՁ ոլորտի պետական քաղաքականություն և ոլորտի զարգացմանն ուղղված ծրագրեր իրականացնող հիմնական կառույցը¹⁵ : Ներդրվել են լիցենզիաների հայտերի ընդունման, կազմակերպությունների էլեկտրոնային գրանցման, հարկային հաշվետվությունների ներկայացման և մի շարք այլ էլեկտրոնային համակարգեր, որոնց

¹⁴ «Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին» ՀՀ օրենք, ՀՀՊՏ N33, 30 դեկտեմբերի 2000 թ.:

¹⁵ ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.smednc.am

արդյունավետ կիրառման դեպքում ՓՄՁ սուբյեկտների համար բարենպաստ դաշտ կստեղծվի հատկապես փաստաթղթաշրջանառության և պետական ծառայողների հետ անհարկի շփումները նվազեցնելու տեսանկյունից:

Ատենախոսությունում ուսումնասիրված տեսական և գործնական հիմնախնդիրների վերլուծության արդյունքում հանգել ենք մի շարք եզրակացությունների և առաջարկությունների, որոնք կարող են նպաստել ԴԴ-ում բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորմանը, միջազգային մասշտաբով ԴԴ մրցակցային դիրքերի բարելավմանը, մրցակցային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը.

1. Մրցակցային միջավայրի ստեղծումը անհնար է առանց պետության միջամտության: Ներկայումս չկա մի երկիր, որտեղ պետությունը չմիջամտի տնտեսության գործընթացներին: Մրցակցությունը, որպես շուկայական տնտեսության շարժիչ ուժ, չի կարող ինքնուրույն ձևավորվել: Այն պետք է ձևավորվի պետության մշտական վերահսկողության և համապատասխան մրցակցային քաղաքականության իրականացման միջոցով, ինչը պետք է նպաստի շուկաներում մրցակցության տարածմանը, բարենպաստ մրցակցային միջավայրի ձևավորմանը, մենաշնորհների կանխմանը, բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար հավասար մրցակցային պայմանների ապահովմանը: Հատկապես անցումային տնտեսություններում, որտեղ տնտեսական գործունեության վարչական կառավարման համակարգն աստիճանաբար փոխարինվում է շուկայական ինքնակարգավորմամբ, սակայն մրցակցության ձևավորման համար անհրաժեշտ նախապայմանները բացակայում են, մրցակցային միջավայրի ձևավորման հարցում պետական միջամտությունը վճռական նշանակություն է ստանում: Առանց պետական միջամտության տնտեսվարող սուբյեկտների միջև կգտնվեն այնպիսիք, ովքեր, օժտված լինելով որոշակի մրցակցային առավելություններով, շուկայում կան ճյուղում ձեռք կբերեն մենաշնորհային դիրք: Սակայն պետական միջամտությունը պետք է ունենա իր սահմանները, որպեսզի չնվազեցնի տնտեսվարող սուբյեկտների խթանները և ազատությունը, որոնք շուկայական տնտեսության կարևոր բնութագրիչներից են: Պետական միջամտության սահմանները հարաբերական հասկացություն են, քանի որ կախված տեղից, իրավիճակից և պայմաններից

պետությունը կարող է դառնալ մրցակցային միջավայրի ձևավորման ակտիվ սուբյեկտ հակազդելով մենաշնորհային կարգավիճակին կամ վերածվել պասիվ դիտորդի չխոչընդոտելով ծավալվող առողջ մրցակցային հարաբերությունների զարգացմանը:

2. Ժամանակակից գլոբալացման պայմաններում, երբ մրցակցությունը դուրս է գալիս ազգային շուկայի սահմաններից և ձեռք է բերում միջազգային բնույթ վերածվելով անդրազգային կորպորացիաների միջև մենաշնորհային պայքարի, ավելի է կարևորվում պետության դերը հայրենական արտադրողների աջակցության և ազգային արտադրանքի մրցունակության բարձրացման հարցում:
3. Մասնագիտական գրականության մեջ լայն տարածում ստացած Լերների և Չերֆինդալի ինդեքսները լիարժեք հնարավորություն չեն տալիս գնահատելու մրցակցային միջավայրն ամբողջ տնտեսության մասշտաբով: Դրանք առավել նպատակահարմար են ճյուղի մրցակցային միջավայրի գնահատման համար: Այդ իսկ պատճառով ատենախոսությունում դուրս է բերվել մի այնպիսի ցուցանիշ, որը հնարավորություն կտա համեմատության մեջ դիտարկել տարբեր երկրների մրցակցային միջավայրերը՝ որպես տնտեսական համակարգի կարևոր բնութագրիչ:
4. ՀՀ-ում մրցակցային հարաբերությունների կարգավորումը հիմնականում իրականացվում է ՀՀ ՏՄՊԴՀ-ի կողմից: Օրենքի վերջին փոփոխություններով ընդլայնվել է Հանձնաժողովի իրավասությունների շրջանակը, Հանձնաժողովին տրվել են լրացուցիչ լիազորություններ՝ հնարավորություն ընձեռելով առավել արդյունավետ վերահսկել ապրանքային շուկաներում մրցակցային միջավայրը, բացահայտել տնտեսվարող սուբյեկտների կողմից Օրենքի խախտման դեպքերը, հստակեցվել են Օրենքում առկա բազմաթիվ սողանցքները: Սակայն դեռևս առկա են մի շարք բացթողումներ: Հանձնաժողովը վաղուց պետք է «հայտնաբերել և պատժել» սկզբունքից անցում կատարի կանխարգելման սկզբունքին: Պետք է կանխարգելվեն տնտեսվարողների կողմից անբարեխիղճ մրցակցության, հակամրցակցային համաձայնությունների, գերիշխող դիրքի չարաշահումների դեպքերը: Հակամենաշնորհային մարմինը ապրանքային շուկաների

կառուցվածքի պարզ ուսումնասիրություններից (շուկայում գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների քանակ, շուկայի կենտրոնացվածության աստիճան) բացի, պետք է գնահատականներ ներկայացնի ապրանքային շուկաների աշխատանքի արտադրողականության, ինքնարժեքի ձևավորման, ներմուծման և իրացման գների վերաբերյալ, ինչպես նաև առանձին շուկաների գծով հաշվարկի հասարակության կրած կորուստները մենաշնորհներից: Հանձնաժողովը պետք է մշտապես իր տրամադրության տակ ունենա ինչպես ազգային վիճակագրական, այնպես էլ միջազգային կազմակերպությունների կողմից կատարված ստվերային տնտեսության ծավալների, ՀՆԱ-ի, գների մակարդակի վերաբերյալ կատարված հաշվարկները և գնահատականները: Նշված միջոցառումների իրականացումն անշուշտ իր դրական ազդեցությունը կունենա Հանձնաժողովի գործունեության արդյունավետության բարձրացման վրա:

5. Իսկ ինչ վերաբերվում է մրցակցային հարաբերությունները կարգավորող օրենսդրությանը, ապա այնպես, ինչպես «մրցակցային միջավայր» կատեգորիան անընդհատ փոփոխվում է՝ կախված մրցապայքարի մասնակիցների քանակից և կազմից, դրանց ուժերի տեղաբաշխումից և մրցակցության բնույթից, ճյուղում պահանջարկի հագեցվածությունից, արտադրության կենտրոնացման աստիճանից և այլ գործոններից, այդ միջավայրը կարգավորող օրենսդրությունը նույնպես պետք է անընդհատ փոփոխվի և կատարելագործվի: Այս առումով կարևորվում է միջազգային փորձի ուսումնասիրությունը և համապատասխան փորձի տեղայնացումը հաշվի առնելով սեփական առանձնահատկությունները:
6. ՀՀ մրցակցային միջավայրի ձևավորման համար լուրջ խոչընդոտ է հանդիսանում ստվերային տնտեսության մեծ չափերի առկայությունը, քանի որ այն անհավասար պայմաններ է առաջացնում մրցակիցների համար, խեղաթյուրում է առանձին ապրանքային շուկաներում մրցակցության իրական գնահատականը դրանով իսկ խոչընդոտելով նաև հակամենաշնորհային մարմնի գործունեությանը: Նման պայմաններում Հանձնաժողովի գծունեության արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումները դառնում են անիմաստ:

7. ՀՀ մրցակցային միջավայրի ձևավորման հիմնախնդիրները բազմաթիվ են գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների առկայություն, այդ թվում համատեղ գերիշխողներ, շուկաների կենտրոնացման բարձր աստիճան, շուկա մուտք գործելու վարչական և տնտեսական արգելքների առկայություն, ինստիտուցիոնալ խնդիրներ, որոնք խոչընդոտում են ապրանքների և ծառայությունների շուկայի բնականոն գործունեությանը և պայմանավորված են սահմանափակող կարգավորումներով, մրցակցային կանոնների և պետական գնումների համակարգի ոչ լիարժեք ապահովմամբ, մրցակցությունը սահմանափակող պետական օժանդակությամբ, որոնք միայն մեկ Հանձնաժողովի գործունեությամբ հնարավոր չէ լուծել: Այս առումով խիստ անհրաժեշտ է պետական այլ մարմինների մասնակցությունը և ամենակարևորը քաղաքական կամքի առկայությունը:
8. ՀՀ մրցակցային միջավայրի կատարելագործման համար կարևոր նախադրյալ է հադիսանում ներդրումների ծավալների ավելացումը: Քանի որ ներքին ներդրումների աղբյուրները սահմանափակ են, ուստի շեշտը պետք է դնել օտարերկրյա ներդրումների ներգրավման վրա: Դրա համար անհրաժեշտ է բարձրացնել ներդրումները կարգավորող օրենսդրական դաշտի թափանցիկությունը և կայունությունը, պարզեցնել օտարերկրյա ընկերությունների գրանցման, տեղակայման, լիցենզավորման, գործունեության իրականացման ժամանակ անհրաժեշտ վարչարարական մեխանիզմները, ներդրումներն ուղղել դեպի տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարությունների և նորամուծությունների ֆինանսավորում:
9. Երկրի մրցակցային միջավայրի բարելավման հարցում հատկապես մեծ է փոքր և միջին ձեռնարկատիրության դերը: Այս առումով ՓՄՁ ոլորտը պետք է հանդիսանա ՀՀ տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը: ՓՄՁ ոլորտի զարգացմանը խոչընդոտող ֆինանսական միջոցների անհասանելիության հիմնախնդիրը լուծելու համար անհրաժեշտ է ՓՄՁ-ներին տրամադրվող վարկերը դարձնել առավել մատչելի և հասանելի, ստեղծել միկրոֆինանսավորման ծրագրեր, միկրովարկավորմամբ զբաղվող մասնագիտացված բանկեր: Պետք է առանձնակի ուշադրություն դարձնել ՓՄՁ-

ներին աջակցող ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը: Կարևոր նշանակություն ունի բիզնես ուսուցման և կադրերի վերապատրաստման կրթական ծրագրերի իրականացումը, բիզնես-տեղեկատվական, տեղեկատվական-վերլուծական կենտրոնների ստեղծումը:

10. Ժամանակակից տնտեսությունում հաջողության հասնելու կարևոր գրավական է գիտատեխնիկական առաջընթացը, իսկ արտադրության գործոններից կարևոր նշանակություն են ստանում մտավոր ունակությունները և տեղեկատվական տեխնոլոգիաները: Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը շուկայական մրցակցությունում հաջողության հասնելու, արտադրության արդյունավետության բարձրացման, ծախսերի կրճատման, արտադրանքի որակի բարձրացման հիմնական գործոնն է դարձել: Իսկ ֆիրմայի մրցակցային առավելությունները այժմ որոշվում են մարդկային կապիտալի որակով, աշխատողների կրթական մակարդակով: Աշխատուժի և հունձանյութերի քանակական առատությունը այլևս մրցակցային առավելություն չի համարվում: Համաշխարհային տնտեսության զարգացումը նպաստում է երկրների միջև տեղեկատվական տեխնոլոգիաների փոխանցմանը, ինչի արդյունքում դրանք հասանելի են դառնում տնտեսվարող սուբյեկտների ավելի լայն շրջանակի: Տեղեկատվական տեխնոլոգիաների դերը կարևորվում է նաև նրանով, որ էլեկտրոնային առևտրի զարգացման հիմնաքարն են: Ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաները նաև հնարավորություն են տալիս փոխանակության օբյեկտ դարձնել այնպիսի ծառայություններ, որոնք նախկինում հնարավոր չէր վաճառել միջազգային շուկաներում: Հայաստանն այս ամենի համար ունի համապատասխան ներուժ: Սնուն է հետևողական և ճիշտ մշակված քաղաքականության միջոցով արդյունավետ օգտագործել ռեսուրսները ցանկալի արդյունքի հասնելու համար:

11. Վերջում ավելացնենք, որ ՀՀ արտաքին պարտքի մեծացող չափերը, ՀՆԱ-ի, ներդրումների ծավալների կրճատումը, գնաճի, աղքատության բարձր մակարդակը, արտագաղթի միտումները, ինչպես նաև ստվերային տնտեսության մեծ ծավալները էլ ավելի են կարևորում երկրի մրցունակության, ինչպես նաև մրցակցային միջավայրի բարելավման հարցում պետական այլ մարմինների, հասարակության ավելի լայն խավերի ներգրավման անհրաժեշտությունը: Սա

նշանակում է, որ երկրի մրցակցային միջավայրի բարելավման հարցը պետք է ձեռք բերի համապետական նշանակություն:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մաթևոսյան Ա. Ս. «Մրցակցության տեսական հայեցակարգերը», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», N 7, Երևան, 2010 թ., էջ 179-190,
2. Մաթևոսյան Ա. Ս. «Մրցակցության մոդելները. կատարյալ և ոչ կատարյալ մրցակցություն», «Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում», N 3, Երևան, 2011թ., էջ 85-94,
3. Մաթևոսյան Ա. Ս. «Մրցակցային միջավայրի պետական կարգավորման անհրաժեշտությունը», Ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնախնդիրները: Գիտաժողովի նյութեր/ ՀՊՏՀ-Երևան, Տնտեսագետ, 2013 թ., էջ 209-214,
4. Մաթևոսյան Ա. Ս. «Մրցակցային միջավայրի կատարելագործման հեռանկարները և նախադրյալները ՀՀ-ում», «Ֆինանսներ և էկոնոմիկա» հանդես, թիվ 3 (153), մարտ 2013թ., էջ 6-8:

МАТЕВОСЯН АРЕВИК МНАЦАКАНОВНА

Теоретические проблемы формирования конкурентной среды

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 - „Общая экономика“.

Защита диссертации состоится 22-го января 2015 г. в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 014 ВАК РА по экономике, действующего в Армянском государственном экономическом университете по адресу: 0025, г. Ереван, ул. М. Налбандяна 128.

РЕЗЮМЕ

Конкуренция является неотъемлемым элементом современной рыночной экономики. В условиях нынешнего экономического развития невозможно представить какую-либо область экономики или систему общественных отношений, где роль и значение конкуренции рассматривались бы как второстепенные факторы. Формирование здоровой конкурентной среды приобретает особую важность в переходных экономических системах. Одной из приоритетных задач для любой страны, выбравшей путь перехода к рыночной экономике, должно быть формирование благоприятной конкурентной среды для действующих на рынке хозяйствующих субъектов.

Основная цель диссертации – исследовать и представить текущее состояние конкурентной среды в РА на основе анализа преобразований в области конкуренции, теоретико-методических основ оценки конкурентной среды и обоснованности необходимости ее государственного регулирования в условиях современной глобализации с выявлением основных препятствий и предложением научно обоснованных мер по их преодолению.

Для реализации заданной цели определены следующие главные задачи:

- исследовать содержание экономической категории “конкуренция”, выявляя ее роль в рыночной экономике,
- изучить критерии оценки конкурентной среды,
- проанализировать и оценить особенности государственного регулирования конкурентных отношений в РА,
- выявить ключевые направления и механизмы улучшения конкурентной среды в РА,
- выявить особенности формирования конкурентной среды в РА на основе сравнительного анализа,
- изучить и выявить предпосылки и перспективы совершенствования конкурентной среды в РА.

Объектом исследования является конкурентная среда как основа рыночной экономики и ключевой фактор устойчивого развития экономической системы. Предмет исследования –

система экономических отношений, складывающихся в процессе формирования и развития конкурентной среды.

В первой главе диссертации "Конкуренция как движущая сила рыночной экономики" обсуждены сущность и роль конкуренции в рыночной экономике, модели конкуренции и преобразования в области конкуренции в современных условиях.

Во второй главе диссертации "Теоретические проблемы оценки и необходимости государственного регулирования конкурентной среды" исследованы актуальные проблемы государственного регулирования, в том числе проблемы государственного регулирования конкурентных отношений в РА, а также теоретико-методические основы оценки конкурентной среды.

В третьей главе диссертации "Пути улучшения конкурентной среды в РА" на основе разработанного автором интегрального показателя и сравнительного анализа по региональным странам (Грузия и Азербайджан) оценена конкурентная среда в экономике РА, выявлены ее сильные и слабые стороны, предпосылки и перспективы ее улучшения.

Основная научная новизна диссертационного исследования выражена в следующих положениях:

- на основе анализа теоретических концепций экономических категорий "конкуренция" и "конкурентная среда" и их сопоставления дано новое определение этих категорий, которое основывается на процессе интернационализации конкуренции и необходимости государственного регулирования конкурентных отношений,
- на основе анализа ключевых факторов конкурентной среды разработан интегральный показатель оценки конкурентной среды в масштабе национальной экономики.
- посредством интегрального показателя оценки конкурентной среды выявлены основные преимущества и недостатки конкурентной среды в РА, указаны на ключевые направления его совершенствования.

Практическая значимость диссертации заключается в том, что выявленные в процессе исследования теоретические и практические результаты могут быть использованы соответствующими структурами РА в процессе разработки политики улучшения конкурентной среды, а также реализации антимонополистических мероприятий.

Основные положения диссертационной работы отражены на 4 статьях. Диссертация распечатана на 117 страницах и состоит из вводной части, 3 глав, выводов и предложений и списка литературы.

MATEVOSYAN AREVIK MNATSAKAN

The Theoretical Problems of the Establishment of Competitive Environment

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.01 - "General Economics".

The defense of the thesis will take place on January 22, 2015 at 14⁰⁰ o'clock at 014 Council on Economics of SCC RA at Armenian State University of Economics at the address: 128 M. Nalbandyan str., 0025, Yerevan, Armenia.

RESUME

Competition is an inseparable part of the modern market economy. In the conditions of modern economy development it is impossible to imagine any sphere of economy or any viewpoint of social relations where the role and significance of competition will be considered as a secondary process. The formation of the fair competitive environment becomes of utmost importance particularly in transitional economy systems. The formation of favourable competitive environment for the enterprising body functioning in the market must be one of primary problems for any country which has chosen the way of transition to the market economy.

The main goal of this research is to investigate and represent the modern state of the competitive environment in the RA revealing the main impediments and suggest scientifically-grounded approaches for surmounting the latter as a result of the analyses of supporting the necessity of theoretical-methodical bases and state regulation of competition metamorphoses and competitive environment assessment in modern globalization conditions.

For the attainment of this goal the following problems have been put forward:

- to investigate the contents of the economical category "competition" revealing its role in the market economy,
- to study the assessment criteria of the competitive environment,
- to analyze and assess the peculiarities of the state regulation of competitive relations in the RA,
- to reveal the main directions and mechanisms of improving the competitive environment in the RA,
- to reveal the development peculiarities of the competitive environment in the RA on the bases of comparative analysis,
- to investigate and reveal the improvement premises and perspectives of the competitive environment in the RA.

The target of the investigation is the competitive environment as the bulwark of the market economy and a pivotal factor of the stable development of the economy system. The subject matter of this research is the system of economic relations formed as a result of the process of the establishment and development of competitive environment.

In the first chapter of the thesis –“Competition as a driving force behind the market economy” encompasses analyses of the essence and role of competition in the market economy, of the competition models and those of competition metamorphoses in modern conditions.

In the second chapter of the thesis –“The theoretical problems of the significance of the competitive environment assessment and state regulation” analyses have been carried out referring to the modern problems of the state regulation of the competitive environment including the state regulation problems of competitive relations in the RA as well as the theoretical bases of the competitive environment assessment.

In the third chapter of the thesis –“The improvement directions of the competitive environment in the RA” the competitive environment of the economy in the RA has been evaluated, its advantages and disadvantages, improvement premises and perspectives have been revealed on the basis of the comparative analyses of the integral index elaborated by us compared with that of the regional countries (Georgia and Azerbaijan).

The scientific novelties of the dissertation are the following:

- on the bases of analyzing and comparing the theoretical concepts of the economical categories such as “competition” and “competition environment”, new definitions of the latter have been provided based on the internationalization process of competition and the relevance of the state regulation of competitive relations,
- on the bases of analyzing the main factors of the competitive environment integral index of the assessment of competitive environment has been elaborated on the national economy scale.
- the main advantages and disadvantages of the competitive environment in the RA have been revealed through the assessment integral index of the competitive environment and the main improvement directions of the latter have been pointed out.

The practical significance of the dissertation is that the theoretical and practical results achieved during these studies can be used by the RA work appropriate bodies while holding anti-monopoly activities as well as while developing the policy of improving the competitive environment.

The main positions of dissertation work are reflected in 4 articles. The thesis it is unpacked on 117 pages and 3 chapters, conclusions and offers and the list of references consist of the prolog.

